# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.01.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**

**ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2018/198**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.12.2018թ. թիվ 27/26-3/23883-18 գրությամբ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00479242/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սփյուռքի նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 17.12.2018թ. թիվ 15.1/2800-18 գրության հիման վրա, 21.12.2018թ. նախաձեռնել է «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

**2. <u>ՀՀ սփյուռքի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ սփյուռքի նախարարությունը 17.12.2018թ. թիվ 15.1/2800-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ սփյուռքի նախարարության կողմից միջոցառումների հետ կապված ծառայությունների գնման նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 7-ին հայտարարվել է «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել հրավերի պահանջներին բավարարող, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԷՅԵԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից, մասնակցի հարկային պարտավորությունների, ինչպես նաև, հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացությունը տրամադրելու արդյունքում պարզվեց, որ «ԷՅԵԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջները, խնդրում եմ, սահմանված կարգով, «ԷՅԵԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

**3. <u>«ԷՅԵԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԷՅԵԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի հակիրճ նկարագրությունը.

ՀՀ սփյուռքի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպվել է «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 12-ին սահմանված ժամկետում ՀՀ ՖՆ կողմից տրամադրվեց դրական եզրակացություն:

Ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Նույն արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր:

Այնուհետև՝ 21.12.2018թ. gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է նույն թիվ 3 արձանագրությունը, թվագրված նույն 12.12.2018թ.-ով՝ սակայն այլ բովանդակությամբ, մասնավորապես՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության հիման վրա՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 1.1 կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32–րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1)շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2)չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները կազմված և հրապարակված են խախտումներով, այն է՝ 12.12.2018թ. թիվ 3 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է, առանց որակավորման փաստաթղթեր պահանջելու և ուսումնասիրելու, «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, այնուհետև նույն 12.12.2018թ. թիվ 3 արձանագրությամբ, բայց արդեն միանգամայն այլ բովանդակությամբ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժել է, այն էլ այն պարագայում, որ երկրորդ թիվ 3 արձանագրությունը հրապարակվել է gnumner.am համացանցային կայքում 21.12.2018թ.-ին՝ այսինքն 9 օր անց:

Այսպիսով, Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է այն հիմնավորմամբ, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին չհամապատասխանող, այն է՝ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը հավասար է զրոյի:

Սակայն, այս պարագայում հատկանշական է նաև այն հանգամանքը, որ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելուց հետո գնահատող հանձնաժողովը նույն օրն

էլեկտրոնային եղանակով չի ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովը՝ չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները՝ ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատված փաստաթղթի շտկված տարբերակը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից:

Հատկանշական է նաև այն փաստը, որ այսպիսի կարծիք է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ իր կողմից կայացրած նախկին որոշումներով (օրինակ, 25.07.2018թ. ընդունված ՍՑ-ԷՍ-2018/99 որոշումը):

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2018/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.12.2018թ. թիվ 27/26-3/23883-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ սփյուռքի նախարարության 17.12.2018թ. թիվ 15.1/2800-18 գրությունը, «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

(այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.12.2018թ. թիվ 2, 12.12.2018թ. նիստի թիվ 3, 21.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցութային հայտը.

ՀՀ սփյուռքի նախարարության կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով հրատապության հիմքով մեկ անձից գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և կից ներկայացնում է որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընթացակարգի շրջանակներում «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 8,950,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 12.12.2018թ. հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության (www.gnumner.am կայքում հրապարակվել է 13.12.2018թ.) 1-ին կետի համաձայն՝ «ՍՆ-ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ 12.12.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրվել է դրական եզրակացություն: Ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Նույն արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր:

21.12.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է 12.12.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած Հանձնաժողովի մեկ այլ՝ թիվ 3 լրամշակված արձանագրությունը, որի 1-ին կետով արձանագրվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից ներկայացված

հայտարարությունը համարվում է իրականությանը չհամապատասխանող: Մասնավորապես, ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 1.1 կետով կայացրած որոշմամբ Հանձնաժողովը մերժել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով,

• 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

• 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա

ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանդագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին

• 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

• 7.18 կետի համաձայն՝ Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրվող նիստում՝ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության մեջ նշված որակավորման չափանիշի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխա-տանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 7.19 կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.18-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Ընդ որում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը

գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընթացակարգի շրջանակներում «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 8,950,000 ՀՀ դրամ:

- www.gnumner.am կայքում 13.12.2018թ. հրապարակված Հանձնաժողովի 12.12.2018թ. հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՍՆ ՀՄԱ-ԾՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված է դրական եզրակացություն, որի հիման վրա ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը համապատասխանող:

- 21.12.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է 12.12.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած Հանձնաժողովի մեկ այլ՝ թիվ 3 լրամշակված արձանագրությունը, որի 1-ին կետով արձանագրվել է, որ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների հանախառնի եկամտի հանրագումարը կազմել է 0 ՀՀ դրամ, ինչի արդյունքում Հանձնաժողովը մերժել է «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը:

- Ընկերության վերաբերյալ ներկայացված՝ կոմիտեի կողմից տրամադրված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելուց հետո Հանձնաժողովը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել Ընկերությանն՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը՝

խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները՝ ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատված փաստաթղթի շտկված տարբերակը ներկայացնելու՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.12.2018թ. թիվ 27/26-3/23883-18 գրությամբ «ԷՅԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00479242/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**